



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«05» 02 2020թ.

N..... 127-Ա.....

Հ Ր Ա Մ Ա Ն

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 441-Ա հրամանը և «ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊ ընկերության կողմից թույլ տված խախտումների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության 2020 թվականի հունվարի 24-ի թիվ Ն/26.1/174-2020թ. միջնորդագիրը:

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հարուցել վարչական վարույթ «ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊ ընկերության թույլ տված խախտումների հիմքով:
2. Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին՝
 - 1) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին.
 - 2) վարչական վարույթի արդյունքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ներկայացնել համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

04.02.2020

X 

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան